

«ՀԱՄԱՐԱՐՁՄԱՆ ԵՐԿՈՒՇԱԹԻՆ» ՊԱՐԵՐԳԻ
ԻՄԱՍՏԱՏԵՔՍԱԲԱՆԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՓՈՐՁ

Ռ. Հ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

«Համարձման երկուշաբթին» հանրահայտ պարերգը լայն տարածում է ունեցել արևմտահայ բանավոր ավանդության մեջ և այժմ էլ մեծ տեղ ունի ազգորական այլ շրջաններից սեբող բանասացների երգացանկում:

Սկսած ամենավաղ գրառումներից, ի մի են բերվել պարերգի բազմաթիվ տարբերակներ, որոնց քանակն ըստ մեր ձեռքի տակ եղած նյութերի՝ հասնում է երեսունհինգի: Պարերգի կառուցվածքային, տաղաչափական հատկանիշների և թեմատիկ-դադափարական հիմքի վրա համադրել ենք տարբերակները և հնարավորին չափ վերականգնել ավանդական այն կայուն ատաղձը, որի հենքի վրա ծավալվել ու զարգացել են տարբերակները: Պարերգն առաջին անգամ հրատարակվել է 1868 թ. «Հայկական աշխարհում», որտեղից Մ. Միանսարյանցը զետեղել է «Քնար հայկականի» էջերում՝ «Երգ Վանի լեզվով» խորագրով¹, Բնագիրը այստեղ էլ ամբողջական չէ (պահպանված է միայն հնձի պատկերը), մնացածը՝ տարբեր երգերի հարակցումներ են:

Ի տարբերություն այլ պարերգերի, որոնք մեծ մասամբ կազմվում են իրարից անկախ երկատողերի և կրկնակների տարբեր հարակցումներով, «Համարձման երկուշաբթին» պարերգն ունի որոշակի սյուժետային գծեր և իմաստային հենակետ: Տարբերակային բոլոր ձևափոխությունների, տեքստային ծավալումների և հավելումների համեմատ, կայուն ինվարիանտային բնույթ ունի պարերգի հիմնական իմաստն ու բովանդակությունն՝ արտահայտող մասը (ցանք կամ հունձ), որով պայմանավորված է գործողությունների զարգացման ամբողջությունը՝ սերտորեն աղերսված երկրագործական ծիսական կենցաղին:

Եկավ վարուցանելու հըյամ.
Կոռնկ ամուլ լծեցի,
Ղազնը հորիկ լծեցի,
Կաքավ հացվուր բռնեցի,
Արտիկա վաճեցի, ցանեցի,
Ցանեցի ու թըմմեցի...
Եկավ ջրելու հըյամ.
Աչքերս աղբյուր էրեցի.
Թեհրս թիակ էրեցի,
Ջրեցի ու թըմմեցի...
Եկավ քաղելու հըյամ.
Ձեռքերս մանգղոն էրեցի,
Քաղեցի ու թըմմեցի...
Եկավ փոծխելու հըյամ.
Մատենքսը փոծխ էրեցի,
Փոծխեցի ու թըմմեցի...
Եկավ կապելու հըյամ.
Մազերս կեմ օլրեցի,
Ծեկ ձեռքս բունսքի էրեցի,

Համարձման էրգուշաբթին, հայ,
Նինարե, հայ նինարե,
Գովան էրկու տեքերկին, հայ
Նինարե, հայ, նինարե:
Գրովան վըր պուտկի քերքին,
Թաթխան իրարու հոր դին,
Վերցին զփոցիս ու գերանդին,
Իջան հըս ծորու ափին,
Քաղեցին, քաղթրփեցին,
Մանրիկ-մանրիկ խորմեցին,
Կեմիկ չէղավ՝ կապեցին,
Չամթեկ կեմիկ էրեցին.
Հոտաղ չէղավ՝ քշեցին,
Ճնճուղ հոտաղ էրեցին,
Խարզան չէղավ՝ քշեցին,
Սև օձ խարզան էրեցին.
Սելիկ չէղավ՝ բարձեցին,
Մեշկունք սելիկ էրեցին.
Կես փշերին քշեցին,

¹ Մ. Միանսարյանց, Քնար հայկական, Պետերբուրգ, 1868, էջ 183—184:

Խոռմեցի ու կապեցի,
Բարդեցի ու թրմմեցի...²

Յարոյ պանով ընցուցին.
Յար քնուկ էր շիմցուցին,
Վրտնուկ էր սրբեցին³:

Պաբերգի տարբերակները երբեք չեն տարբեր կրկնակներով, որոնք մեծ մասամբ բնագրերին միանում են առանց-շարժունակ հարակցումներով և իմաստային ազդեց շունեն դրանց հետ:

Օրինակ՝

Լեն թուփ կանաչ տերևիկ,
Բեր պաղեմ գալից վերևիկ,
Հա Ջումլամաւ, Ջումլամաւ,
Լերք, քելք էրթանք Ջումլամեն⁴:

Շեկիկ մազիւր Գույո ջան
Չաթմա ընքնիւր Գույո ջան⁵:

Լեռավել վաղ դրառված տարբերակներում (Գ. Սյւլանձտյանց՝ Լ. Հայկու-նի⁶) և հայտ են դադարում իմաստային-կախյալ հարակցություններ բառադարձվածային կրկնություններ, որոնք ընդգծում են երկրադարձական տարբեր աշխարհայիններ՝ ավարտը՝

Յանեցի ու թրմմեցի...
Ջոեցի ու թրմմեցի...
Քաղեցի ու թրմմեցի...
Փոթեցի ու թրմմեցի...

Երկնայինների մեծ մասը անիմաստ (թերևս, ժամանակի ընթացքում իմաստադրված) հնագույն հնչյունաշարային կրկնակներ են՝ «Դրր լոյ-լըմ լոյ, դրր լոյ-լըմ լոյ»⁷, «նի, նի, նտրինա»⁸, «Հանիկ, նանիկ, նա նանի»⁹, «նայ նինայ, նայ նինայ...»¹⁰, որոնք աղերսվելով ծիսահամայնական արարողություններին, անընդմեջ կրկնություններ կազմակերպել և ներգործման ուժ են հաղորդել դրանց:

Պաբերգին բնորոշ է համաշնչա տաղաչափական կառուցվածքը, որը հենվում է գործող շնչոտների վրա և հատկանշվում բարձրացող-ընկնող ռիթմով:

Օրինակ՝

Նա՛յ, նա՛յ, նա՛յ, նա՛յ,
Նա՛յ, նա՛յ, նա՛յ, նա՛յ,
Նա՛յ-նրո նա՛յ, նա՛յ,
Նա՛յ-նրո նա՛յ, նա՛յ...
Նա՛յ-նրո նա՛յ¹¹:

² Գ. Սյւլանձտյանց, Երկեր, Կ. 1, Երևան, 1978, էջ 535—537:

³ Հայկական ժողովրդական երգեր և նվաղներ, Բալին (այսուհետև՝ ՀԺԵ), Երևան, 1984, էջ 166:

⁴ Սպ. Մեկիքյան, Հայ ժողովրդական երգեր և պարեր, Կ. 1, Երևան, 1949, էջ 231:

⁵ ՀՀ ԳԱ հնագիտության և աղագրության ինստիտուտի բանահյուսության արխիվ, խառը ֆոնդ՝ FFI: 0175,02:

⁶ Ս. Հայկունի, Էմինյան աղագրական ժողովածու (այսուհետև՝ ԷԱԺ), Կ. 2, Վաղարշապատ, 1906, էջ 88:

⁷ Գ. Սյւլանձտյանց, նշվ. աշխ., էջ 535—537:

⁸ ԷԱԺ, էջ 74—76:

⁹ Սպ. Մեկիքյան, նշվ. աշխ., էջ 240:

¹⁰ Նույն տեղում, էջ 233:

¹¹ ԷԱԺ, էջ 80:

¹² ՀԺԵ, էջ 163:

¹³ ՀՀ ԳԱ հնագիտության և աղագրության ինստիտուտի բանահյուսության արխիվ, Բ. Խաչատրյանի ֆոնդ, FRI: 0559—0562 (այսուհետև՝ FRI):

Իսկ որոշ տարբերակներ աչքի են ընկնում դանդաղ, մեղեդային ռիթմով՝ նաև առանց, նախ, նանրա՛յ նա՛յ¹⁴։

«Համբարձման երկուշաբթին» պարերգի սկիզբը՝ հիմնական տեքստին հարակից՝ մի նախադրություն է (որը տարբերակների մեծ մասում պահպանվել է), կենցաղային մի ինտրիգ, որը, հավանաբար ավելի ուշ է մտել պարերգային կառույցը։

Համբարձման էրգուշաբթին.

Դովան էրգու ղեկերգին,

Նրբիբ վրր բուղդի բերքին¹⁵։

Կենցաղային այս դրվագի գեղարվեստական վերարտադրման հիմքում ընկած է համբարձման տոնին իրագործվող նախնական ծիսական մի հավատալիք, ըստ որի՝ ով առաջինն էր հստակում համբարձման երկուշաբթի օրը եփած կաթնապուրի «բերքը»՝ նրան էլ պատկանում նոր տնտեսական տարվա առատությունն ու ապահովությունը¹⁶։ Այդ են հավաստում համբարձման տոնին ելուն իմաստաբանության իրագործվող կաթնապուրի հետ կապված բոլոր սովորություններն ու արարողությունները (կաթնապուրի իբրև զոհաբերություն, իբրև մատուցվող բաժանելի, դաշտերում շաղ տալը, կաթնապուրի «տիկնիկ» պատրաստելը և այլն)¹⁷։ Երկուշաբթի ակնկալվում էր պտղաբերություն և առատություն։

Վերաիմաստավորված այս պատառիկը հիմնական տեքստին հարակից է իր նախնական թեմատիկ իմաստային աղբյուրով, կապված նոր՝ դալիք տնտեսական տարվա առատության և արգասաբերության գաղափարի հետ։ Այս տնտեսական, առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում նաև պարերգի սկսվածքը։ Տարբերակների գերակշիռ մասը սկսվում է «Համբարձման երկուշաբթին» սկսվածքով, մի քանիսը միայն՝ «Վարդերի երկուշաբթի»-ով։

Վարդերի երկուշաբթին.

Առա փոցխն ու դերնդին,

Ընկա ծորն ու ծորափին,

Հա՛ ծորեցի, հա՛ ծորեփեցի,

Մանտրիկ-մանտրիկ խորմեցի...¹⁸

Վարդավառը նույնպես աղբյուրվում է բերքի տոնի, հնադույն նավասարդի՝ նոր տարվա հետ, որը և խորհրդանշում էր՝ հնի ավարտ, ոչնչացում ու նորի վերստեղծում։ Զոհը սովորաբար կատարվում էր նոր տարվա նախօրեին՝ աշխարհի նորացման ակնկալիքով։ Պատահական չէր, որ Սասունում նավասարդին նոր բերքից ստացած ցորենից հաց էին թխում, որը կոչվում էր աշկավա՛ւ և իբրև զոհաբերություն բաժանում դրացիներին¹⁹։ Համբարձման ծեսն էլ կատարվում էր տարեշրջանի սկզբին՝ գարնանը, որը և համընկնում էր ցանքսի՝ ցորենը հողին հանձնելու նվիրատվական արարողությանը, զոհաբերություն, որն ակնկալում էր նոր տնտեսական տարվա աճ և արգասաբերություն։ Բոլոր դեպքերում, պարերգն իր ավանդական սկսվածքով և ծիսահամա-

¹⁴ RFI, 0489--0494։

¹⁵ Նույն տեղում։

¹⁶ RFI, 2701--2702։

¹⁷ Վ. Բողոյան, Երկրագործական մշակույթը Հայաստանում, Երևան, 1972, էջ 455։ Համբարձման տոնին ամեն տեղ եփում էին կաթնապուր, որոշ տեղերում՝ տոնը կոչվում էր կաթնով ապուր, կաթուտիչ կամ կաթնով։ Խիանքում և Տիգրանակերտում կաթնապուրի տոնին երիտասարդները պատրաստում էին փայտե տիկնիկ, որին հարսի ջորեր էին հազցնում և կոչում կաթնով ապրի Արուս։ Իսկ Վարանդայում, նույնիսկ ՄՃ դ. սկզբներին, կաթնապուրը եփում էին հենց դաշտերում և շաղ էին տալիս արտերը, որպեսզի հացը առատ լինի և կանխվեն տարերային աղետները։

¹⁸ ԷԱԺ, էջ 80։

¹⁹ Վ. Պետոյան, Սասնա ազգագրությունը, Երևան, 1965, էջ 90։

յական գործառույթով ծառայել է նոր տնտեսական տարվա նախապատրաստական ժեսերին, որն իր այլազան ծիսական արարողությունների համակարգով հետամուտ է եղել մեկ նպատակի՝ պողաբերության և առատության ակնկալիքի:

Պարերգի հիմնական ավանդական կորիզը, որը վերարտադրում է տարեշրջանի բնական ցիկլերի հետ կապված երկրագործական-արտադրական աշխատանքների ողջ գործընթացը (ցանք կամ հունձ), ներառում է հնագույն դիցաբանական պատկերացումների շերտեր, սոցիալական տարբեր միջավայրերի նստվածքներ: Պարերգի հիմքում ընկած է խոսքի և գործողության հմայության հավատալիքը՝ արտահայտված հմայական-կատարողական գործառույթով: Վերջինիս նպատակն էր՝ հմայական գործությամբ ստեղծել գերբնական ուժերի և հողի՝ իբրև պողաբերման նախասկզբի հետ հաղորդակցվելու հնարավորություն, որով և պետք է կատարվեին հողին պահ տալու (ցանք) և ապա՝ ոչնչացնելու (հունձ) նվիրական ակտերը (մահվան և հարության գաղափարներով), որոնց իրագործման համար երկրագործը պատրաստ էր ի սպաս ընել նաև իր մարմինը՝ իբրև սեփական անձի զոհաբերում: Մարմնի մասնատման երևույթը պարերգում, մասերի բաժանումը (աչքեր, բերան, ատամներ, մեջք, մատներ, սիրտ, մաղեր, ականջներ և այլն) և ապա՝ առարկայացումը, նույնացումը երկրագործական-արտադրական միջոցների հետ (փետատ, հորսելի, մանդղոն, թիակ, բալխիր և այլն), թերևս, մարդու՝ տիեզերական առաջին զոհի հնագույն առասպելի²⁰ հիշողությունն է՝ բանաստեղծականացված ու վերիմաստավորված, որով մարդու մարմնի մասերը նույնացվել են տիեզերքի մասերի, երկրային տարրերի ու արտադրական միջոցների հետ:

Աչքերս աղբյուր էրեցի,
Թևերս թիակ էրեցի,
Ձեռքերս մանգղոն էրեցի,
Պառեկս բալխիր էրեցի,
Ականջս շընիկ էրեցի²¹,
Մատներսի հորսելի արի,
Հնկներսի փետատ էրեցի,
Ակռեքս գերնդի էրեցի²²:

Առասպելական նախնական մտածողությամբ՝ հին Եգիպտական Պտախ աստծու մարմնի մասերը նույնացվել են տիեզերքի մասերի հետ, որոնք հանդես էին գալիս առանձին աստվածություններով²³: Նմանատիպ մի առասպելի հիշատակություն կա նաև հայոց սր. Կարապետի ավանդության մեջ²⁴, ըստ որի՝ նրա մարմինը մասնատում են և ամեն մասի վրա մի վանք կառուցում, ընդ որում մեծ մասամբ՝ բարձունքների վրա (Խայսար-Կեսարիա, Ախթամար), որը նույնանալով տիեզերքի առանցքի հետ՝ խորհրդանշում էր նաև տարեշրջանը: Իրանական ավանդությամբ՝ մարդու մարմնի մասերը նույնացվել են նաև երկրային տարրերի հետ²⁵:

Առասպելական այս ընդհանուր մտածողությունը, որն իր մեջ ներառում է տիեզերքի տալրերի կարգավորման, վերաստեղծման խորհուրդը, իր բանաստեղծական իմաստավորումն է գտել «Համբարձման երկուշարթին» պարերգում հիշատակված մազ-խոտ նույնացման մեջ:

²⁰ В. Н. Топоров, Первочеловек (Мифы народов мира, т. 2. М., 1988, с. 300—302).

²¹ Գ. Մ ր վ ա ն յ ա ն ց, Կշվ. աշխ., էջ 536, 537,

²² ԷԱԺ, էջ 74—76:

²³ В. Н. Топоров, Կշվ. աշխ., էջ 301:

²⁴ FFXII, 5297-57-07.

²⁵ В. Н. Топоров, Կշվ. աշխ., էջ 300.

Մազերս կեմ օլրեցի²⁶,
 Մամեր կեմիկ արեցին²⁷,
 Մամթել կեմիկ էրեցին²⁸,
 Բըրջամ կեմիկ արեցի²⁹,
 Ջամիր փալախ (փափուկ խոտ) էնեցին³⁰,

Պարերգում հիշատակված թռչունները (լակլակ, կռունկ, ճնճուղ, կաքավ, կիվկիվ) աղերսվում են մարդու տիեզերական, աստեղային նախնական պատկերացումներին. զրանք խորհրդանշում են երկինք, որը և նույնանում է նախնային արտադրական սկզբի հետ³¹:

Հազլագ մաջգալ տրեցին³²,
 Ճնճուղ հոտաղ էրեցին³³,
 Կռունկ ամոլ լծեցի³⁴,
 Կաքավ հացվոր բռնեցի³⁵,
 Կաքավ զատվոր էնեցի³⁶,

Այս սուղերի հիմքում և, ընդհանրապես, պարերգում հանդիպող կենդանական աշխարհի անձնավորումը (թռչուն-մարդ նույնացումը) նախնական բանաստեղծական մտածողության մեջ, դիտվում է իբրև խորհրդանշանային արտահայտչաձև: Հայկական դիցաբանական պատկերացումներում արագիլը (լակլակը) ունեցել է մարդկային կերպարանք և եղել է երկրագործ³⁷: Իսկ պարերգում բազմիցս հիշատակված օձն ընկալվել է իբրև բուսական կերպար, որը նույնանալով տիեզերական ծառի հետ, խորհրդանշել է տարեկան ցիկլը՝ մահվան և հավերժության գաղափարներով: Այդ նույնացումն իր յուրովի մեկնակետն ու իմաստավորումն է գտել նաև երգային մտածողության մեջ՝ հիշյալ պարերգի գրեթե բոլոր տարբերակներում:

Սև օձ խամշի էրեցի³⁸,
 Հորտուն խարզան էնեցի³⁹,
 Սև օձ խարզան էնեցի⁴⁰,
 Օձիկ խարզան էնեցի⁴¹,
 Սև օձ խարզան շինեցին⁴²,

«Համբարձման երկուշաբթին» պարերգի իմաստաբանության հիմքում ընկած է ցանքը և հունձը իբրև զոհաբերման արարքներ դիտելու մտածողությունը: Հստ Օ. Ֆ. Ֆրեյդենբերգի իրավացի պնդման՝ «թաղել հողում ցորեն»,

- 26 Գ. Ս ր վ ա ն ձ տ յ ա ն ց, նշվ. աշխ., էջ 536:
 27 Ս պ. Մ ե լ ի ք յ ա ն, նշվ. աշխ., էջ 231:
 28 ՀժԾ, էջ 166:
 29 Ս պ. Մ ե լ ի ք յ ա ն, նշվ. աշխ., էջ 233:
 30 Կենդանի կենցաղավարող երգային բանահյուսություն (այսուհետև՝ ԿԿԵՐ):
 31 Օ. Փ. Փրեյդենբերգ, Миф и литература древности, М., 1978, с. 229
 32 ՀժԾ, էջ 167:
 33 ԷԱԺ, էջ 80, Ս պ. Մ ե լ ի ք յ ա ն, նշվ. աշխ., էջ 233:
 34 Գ. Ս ր վ ա ն ձ տ յ ա ն ց, նշվ. աշխ., էջ 535—537:
 35 Նույն տեղում, էջ 536:
 36 Ս ա. Մ ե լ ի ք յ ա ն, նշվ. աշխ., էջ 233:
 37 Ս. Բ. Арутюнян, Армянская мифология (Мифы народов мира., т. 1, М., 1987, с. 105).
 38 Տ. Ն ա վ ա ս ա ր դ յ ա ն, գ. VI, Թիֆլիս, 1890, FBI: 4892, 13:
 39 FBI: 0559—0561:
 40 ԷԱԺ, էջ 74—76:
 41 Նույն տեղում, էջ 80:
 42 ԿԿԵՐ,

Քե մաբդ, միևնույն է՝ հողին կատարվում է զոհաբերություն, տարբերություններ ոչ թե փաստի, այլ զոհաբերման տիպի մեջ է⁴³։ Նվիրատվական ծեսի այս հաղափարաբանությունը գեղարվեստորեն վերաիմաստավորվել է հիշյալ պարերգում՝ իր մեջ խտացնելով ագրարային պաշտամունքի հետքեր, որոնք մեզ հիշեցնում են հունական Դեմետրային նվիրված տոնախմբություններն ու արարողությունները։ Պարերգի գրեթե բոլոր տարբերակներում զուգահեռաբար սյահաձանվել է հիմնական սյուժետային գծից ածանցված մեկ այլ սյուժետային գիծ, որը, թերևս, ի հայտ է գալիս իբրև առաջինի վերջնական լուծում։ Դա հավաքված բերքը (խոտը կամ ցորենը) յարի դռնով անցկացնելու մոտիվն է՝ իր հերթական հետևանքով։

Յարոջ ցորեն կրեցի
Յարոջ դռնով ընցուցի⁴⁴։

Յարոջ խոտիկ կրեցի⁴⁵։
Յարոջ դռնով անցուցի⁴⁶։

Յարոջ դռնով ընցուցին,
Յար քնուկ էր՝ շիմցուցին⁴⁷։

Ինվարիանտային այս երկատող բոլոր տարբերակներում դառնում է հիմնական փոփոխությունների նկատմամբ կայուն անփոփոխակ, իմաստային նոր հենակետ, որի հիմքի վրա սկսվում է խոսքային ծավալման ու զարգացման հետագա հնարավորությունները, մինչև հանգում է վերջնական նպատակամիտմանը։

Ընծի ի՞նչ խաճենի պիտեր,
Ընծի գիրկ ու ծոց պիտեր⁴⁸։

Ընծը ի՞նճ խաճիլ բիդեր
Ընծը կրգանուց բիդեր⁴⁹։

Յարոճ տոնով ընցուցի,
Յար ֆնուգ էր՝ շիմցուցի.
Քնուդ էր, քրգնուդ էր,
Վարտն էրեսին՝ թփուուդ էր,
Վախենամ՝ խոռվուդ էր.
Հանի փեժգիր սըբըրցի,
Յարոճ տուռն էր գիսապաց,
Թուավ թուլեն՝ ընծի խաճ,
Ընծի ի՞նճ խաճել բիդեր,
Ընծի գիրդ ու ծոց բիդեր⁵⁰։

Կես գիշերի՛. քշեցի.
Յարոջ դռնով անցուցի,
Յար ֆնուկ էր՝ շիմցուցի,
Դաստմալ դոտուց քաշեցի,
Թուխ-թուխ աչքեր սըբըրցի⁵¹։

Մզանք գառնեք թաժա հաց,
Լկնդեր բոջին դիս էխաճ,
Ընծը ի՞նճ խաճիլ բիդեր,
Ընծը կրգանուց բիդեր⁵²։

Այս երկրորդ սյուժետային գիծը իր վերջնական լուծումով և ներքին իմաստակառուցվածքային հատկանիշներով աղերսվում է հիմնական տեքստի առասպելաբանաստեղծական իմաստաբանությանը, այն է՝ հողի և կնոջ, որպես պտղաբերման նախասկզբի նույնացման հետ։ Պարերգի համարյա բոլոր տար-

43 О. Ф. Фрейденберг, *նշվ. աշխ.*, էջ 94։

44 FBI, 4392, 13։

45 Ս պ. Մ ե լ ի ք յ ա ն, *նշվ. աշխ.*, էջ 231։

46 Նույն տեղում, էջ 233։

47 Հծծ, էջ 166։

48 Մ. Մ ի ա ն ս ա ռ յ ա ն ց, *նշվ. աշխ.*, էջ 183—184։

49 Վ. Պ ե տ ո յ ա ն, Սասունի բարբառը, Երևան, 1954, էջ 68։

50 Կ կ Ե Բ,

51 Ս պ. Մ ե լ ի ք յ ա ն, *նշվ. աշխ.*, էջ 233։

52 Վ. Պ ե տ ո յ ա ն, *նշվ. աշխ.*, էջ 68։

րևակներում «Յար քնուդ էր՝ չիմցուցի» ինվարիանտային տողը և յարի քնած լինելու հանդամանքը իր մեջ ներառում է առասպելարանաստեղծական խորհրդանշանային մի պատկեր, որը հանդում է հողի և կնոջ համասեռության րնկայմանը:

Հնագույն առասպելական այս հիշատակը, որն հավանաբար, իր նախնական գործառնությունով ծառայել է երկրագործական ծեսերին, բնորոշ և ընդհանուր է թե՛ սեմական ցեղերի և թե՛ հայերի ու հույների առասպելական ընկալումներին: Շումերական մի առասպելում՝ Շուկալիտուդա այգեպանը տիրառնում է այդու մոտ քնած Խնանա աստվածուհուն, որպեսզի այգին բերքառատ լինի⁵³: Սա, կարծես նույնանում է հայոց հնագույն մի ավանդության հետ, ըստ որի՝ երկրագործական նախապատրաստական ծեսերի ժամանակ, երբ բացված ատունների մեջ (մշարա, գորի, մարգ) առևանգվում էր զատվորը՝ հուժանավորին հաց տանողը⁵⁴: Հունական առասպելում Դեմետրան՝ պտղաբերության և երկրագործության աստվածուհին, Կրետե կղզում, եռակի վարած ողբի վրա կենակցելով Կրետեի երկրագործության աստված Յասոնի հետ, ծնում է Պլուտոսին՝ հարստության և առատության աստծուն⁵⁵: Հողը եռակի վարելը հույնական ունի իր նախնական խորհուրդը. այն, հավանաբար աղբյուրում է տիեզերքի եռամաս կառուցվածքին, ինչպես նաև մարդու կնոջ, որը որպես նախնական սկիզբ նույնանում, ձուլվում է հողին: Նույն իմաստաբարտարությունն ունի հույների մոտ գեղարվեստորեն վերարտադրված պատկերը՝ Լեուրուհու առևանգումը նոր հերկած դաշտում:

Առասպելական ընդհանուր մտածողության մեջ սիմվոլիկ հաղորդակցման փոփոխական ակտերը ունեն իմաստաբարտարական մեկնությունը՝ պտղաբերություն և բերքառատություն:

Իմաստաբարտարական նույն նպատակամիտումն է հուշում յարի քնած լինելու հանդամանքը «Համբարձման երկուշաբթին» պարերգում: Խորհրդանշանային այս պատկերը բազմիցս վերաիմաստավորվել է հայ ժողովրդական վիպական (վեպում ու հեքիաթներում) և երգային բանահյուսության մեջ:

Իմ յարն էր բախչեն ի քուն,
Բուրսայի բարձեր դիտուն,
Կղա, թե պագիկմ՝ առնեմ,
Գլորա ծոցիկն յընկամ⁵⁶:

«Համբարձման երկուշաբթին» պարերգի մանրազնին քննությունը բերում է այն համոզման, որ ավանդական այս պարերգն իր հիմքում ներառել է հին առասպելական մտածողության բազմաշերտ տարրեր ու հիշատակներ: Նախնական առասպելաբանաստեղծական այս հիշատակներն ունեցել են կիրառական-նպատակային գործառնություն՝ ծառայելով երկրագործական նախապատրաստական ծեսերին, որոնց հիմնական միտումն էր՝ սիմվոլիկ հարողակցման տարրեր ձեռքով (ներկա դեպքում ցանք կամ հունձ) ստեղծել հաղորդակցվելու հնարավորություն և խոսքային-հմայական ներգործմամբ ակնկալել նոր տնտեսական տարվա արգասավորություն, առատություն և ապահովություն: Տարվա բնական և տնտեսական ցիկլերը, նոր բերքը աներկայորեն կապվում են նոր տարվա հետ՝ տիեզերական բովանդակությամբ⁵⁷, որը և կազմում է նախնական երկրագործական ծեսերի հիմնական բովանդակությունը:

⁵³ С. Н. Крамер, История начинается в Шумере, М., 1965, с. 86—90.

⁵⁴ FRI: 0229—0230:

⁵⁵ Мифы народов мира, т. 1, с. 365.

⁵⁶ Բենեմ, Հայ աղագրություն և բանահյուսություն, հ. 3, Երևան, 1972, էջ 110:

⁵⁷ Т. Я. Елизаренкова, В. Н. Топоров, О ведийской загадке. типа vṛah-modya (Паремнологоические исследования, М., 1984, с. 31)..

Հեռանալով ծեսից և ընկալվելով իրրե բանաստեղծական ստեղծագործություն, «Համբարձման երկուշաբթին» պարերգը աշխարհագրական տարբեր միջավայրերում, ավանդման-կենցաղավարման տարբեր ոլորտներում, էերառել է նաև հիմնական բովանդակության հետ շաղկերասիվ խաղիկներ ու կրկնակներ, ժողովրդական ուրիշ ծիսերգերի ու հայրենների պատահիկներ՝ հարակցման ուրույն ձևերով ու տեքստային ծավալումներով, Սաարեն պարերգի հորինման առանձնահատկություն է, որը կապված է անհատական և կոլեկտիվ կատարման ձևերի հետ՝ ստեղծելով ավանդման ու գոյատևման հնարավորություն:

Պարերգն իր մեջ ներառելով հնագույն պատկերացումների բազմաշերտ նստվածքներ ու հետագա նորամուծություններ, պահպանել է նաև բարբառային հարուստ բառազանձ (ցաքել, կորոտել, թեղել, թաճել, ծորել, ծորթփել, խորումել, հորիկ ամուլ, ջոմ, բախիր, բանոթի, շընիկ, փետատ, հորսելի և այլն), որոնք այսօր գրեթե դուրս են եկել գործածությունից և գոյատևում են իրրե սոսկ բառային պատմական իրողություններ, քանի որ կենցաղավարումից դուրս են եկել պարերգում հիշատակված երկրագործական-արտադրական հին ձևերը՝ արտադրամիջոցներն ու եղանակները: Պահպանվել են նաև սոցիալական շերտավորումներն ընդգծող բառեր (ռես, հախիկ, շահնա և այլն), որոնք կրկին ընդգծում են, որ պարերգն ապրել է ստեղծագործական զարգացման մի ողջ շրջափոխություն:

Իր լեզվակառուցողական արվեստով, կատարման զորեղ ունիվերսալությամբ լեզվական խորությամբ և խորհրդանշանային պատկերների համակարգով «Համբարձման երկուշաբթին» պարերգը բանահյուսական ուշագրավ մի հուշարձան է, որը դեռ ուսումնասիրության կարիք ունի:

ПОПЫТКА СЕМАНТИКО-ТЕКСТОЛОГИЧЕСКОГО АНАЛИЗА ПЛЯСОВОЙ ПЕСНИ «АМБАРЦМАН ЕРКУШАБТИ»

Р. Г. ХАЧАТРЯН

Резюме

Изучение композиции, особенностей стихосложения и содержания позволяет сопоставить 35 вариантов широко распространенной в западноармянском устном фольклоре плясовой песни «Амбарцман еркушабти» и попытаться восстановить устойчивую форму, которая, развиваясь и распространяясь, легла в основу этих вариантов. Плясовая песня содержит слои мифологических представлений и отголоски былой социальной структуры. В отличие от других, эта песня имеет определенные сюжетные и смысловые линии, тесно связанные с земледельческой обрядностью. В основе семантики плясовой песни лежат сюжеты посева и жатвы, воспринимаемые народом как акты жертвоприношения. «Расчленение» тела в плясовой песне (глаза, рот, пальцы и т. п.) это, по-видимому, поэтизированная память о мифе о космической первожертве, в котором части человеческого тела отождествляются с составляющими космоса, элементами природы и орудиями производства. По словесно композиционному искусству, исполнительской ритмике, глубине тематического охвата и системе символики плясовая песня «Амбарцман еркушабти» представляет собой замечательный памятник армянского фольклора.